գրել։ Բաւական է այսքան միայն ասել՝ որ ամենաթշուառ աղքատ կինը՝ «ինձ ևս Աստուած ողորմած է՝ դեռ ևս երեք օրուան հաց ունիմ ուտելու» ասելով իւր ճակատի զարդերից երեք հատ ոսկի դանձանակն է արկանում։

Ա.Խալիբեան։ ԱՐԵՒ։

ԻՄ ՄՕՏ ԵԿ։

Դու մի՛ դար իմ մօտ բաղդի բոպէին,
Ես չեմ կարող քեզ հասկանալ բնաւին,
Քեզ պատասխանել՝ մասնակից լինել
Չեմ կարող իմ մէջ ես ոյժեր գտնել։
Քո բազմակոհակ աղբիւր գեղեցիկ
Կասկածիս թոյնով կթունաւորեմ։
Քո լաւ՝ առաջին՝ հոտաւէտ ծաղիկ
Անզգուշութեամբս կըոչնչացնեմ։
Իսկ եթէ այրող խեղդող վշտի դէղ
Զգայուն կուրծքումդ հրդեհ գոյացնէ՝
Եթէ ցաւ՝ անձուկ մթին ամպի պէս
Քեզ ամենուստեք կշրջապատէ՝
Եւ տանջանքի տակ ընկած վհատած՝
Քեզ ոչինչ նեցուկ չգտար ուրեք՝
Մի բոպէ հանգիստ զուր կլինիս պտուած՝
Դու այն միջոցին՝ ընկե՛ր՝ իմ մօտ եկ։

Իշխան Բաֆրատունի։

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

Քրիստոս յարեաւ ի մեռելոց՝ Քանի դար է՝ որ իւրաքանչիւր տարի կատնենք Քրիստոսի Յարութիւնը՝ բայց պիտի գայ արդեօք այն փափագելի և գերերջանիկ օրը՝ երբ մենք յարուցած լինելով բարոյապէս ընկած դրութենից՝ արժան և իրաւ տօնել կարողանանք Փրկչի յարութիւնը՝ սիրելով Նորան. որովհետև Տէրը ինքն կասէ. «Եթէ ինձ կսիրէք՝ իմ պատուիրանները պիտի պահէք. ով իմ պատուիրաններս կպահէ՝ նա է ինձ սիրողը»։ Սակայն մեր անդադար թշնամութիւնը՝ խաբէութիւնը՝ զրախօսութիւնը՝ եսականութիւնը՝ անարգ նախանձը՝ արծաթասիրութիւնը՝ ապերախտութիւնը և այլն և այլն՝ Յիսուսի սէրի և յարութեան նշաններ կարող են միթէ համարվել՝ թէ Յիսուսի բոլորովին մահացած թաղված լինելը մեր սրտերում։ Ուրեմն թող դարձեալ և կրկին և միշտ ցանկանք՝ որ Քրիստոս յարութիւն առնէ մեր մէջ և լինի մեզ հետ իւր շնորհով՝ նախապէս մեզ պատրաստելով լինելու Նորա հետ մեր սէրով։

***